

Հայ Աւետարանական
“Արմիս” Երաժշտանոցի Ամապերջի Զոյգ
Երաժշտական Հանդէսներ

Մարդկային կեանքի արդիականացման արտայայտութիւններուն մէջ երաժշտութիւնը կը գրաւէ կեդրոնական տեղ, որպէս մարդկային հոգին ազնուացնող եւ նկարագիրը կերտող դաստիարակիչ ուժ: Ան, մարդուն ամբողջական կազմաւորման անբաժանելի մէկ մշակոյթի երեսն է:

Հովանաւորութեամբ՝ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ՝ Վեր. Յարութիւն Սելիմեանի եւ կազմակերպութեամբ՝ Հայ Աւետարանական «Արմիս» երաժշտանոցի Տնօրէնութեան, Շաբաթ 22 եւ Կիրակի 23 Յունիս, 2013, Հայ Աւետարանական “Արմիս” երաժշտանոցը ունեցաւ ամապերջի աշակերտական զոյգ հանդէսներ, ներկայութեամբ՝ Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեանի, ծնողներուն ու երաժշտասէր հանրութեան:



“Արմիս” երաժշտանոցի Տնօրենուհի՝ Տիկ. Շողակաթ Աբարդեան-Սելիմեան իր բացման խօսքով ողջունեց ներկաները, ապա հակիրճ կերպով ներկայացուց 2012-2013 տարեշրջանին “Արմիս” երաժշտանոցի նախաձեռնած ծրագիրներն ու մասնաւորաբար՝ հակառակ քաղաքիս դժուարին պայմաններուն, ուսուցիչներուն բժախնդիք ու գնահատելի աշխատանքը, որ սատար հանդիսացաւ երաժշտական տարեշրջանը յաջողութեամբ աւարտելու:



Համերգներուն ընթացքին երաժշտանոցի աշակերտները իրենց շնորհուած աստուածատուր երաժշտական կարողութիւններն ու ձիրքերը եւ իրենց ուսուցիչ –ուսուցչուհիներուն ժրաջան աշխատանքին որպէս ապացոյց՝ ներկայացուցին երաժշտական իւրօրինակ կտորներ (հայ ու օտար երաժիշտներու յօրինումներ): Անհատական ելոյթներէ

եսք աշակերտները հանդես եկան երգչախումբով, ըստ դասարանային բաժանմունքներու:

Ներկաները մեծ հաճոյքով, հիացմունքով, բաւարարութիւնով եւ քաջալերական արտայայտութիւններով հետեւեցան երկու ժամուան տեւողութեամբ մատուցուած յայտագրին:



Հանդիսութեան աւարտին Վերապատուելի Համայնքապետը շնորհաւորեց երաժշտանոցի Տնօրէնութիւնն ու ուսուցչակազմը, բարձր գնահատելով բժախնդրօրէն պատրաստուած ու ներկայացուած յայտագիրը, ան մասնաւորաբար մատնանշեց ուսուցիչներուն հետեւողական ու նուիրական աշխատանքը, որուն իբրեւ արդիւնք ի յայտ եկաւ ու յայտնաբերուեցաւ երաժշտական որակաւոր եւ բարձր մատուցում՝ երեսուն հինգ մանուկներու, պատանիներու եւ երիտասարդներու միջոցաւ: Վերապատուելին ըսաւ. «Այսօր հաստատ

համոզումով կարելի է ըսել, թե այս բեմին վրայ կանգնած մանուկներն ու պատանիները պիտի դառնան վաղուան ապագայ մեծամեծ երաժիշտները»: Վերապատուելին իր խօսքի աւարտին գնահատեց իւրաքանչիւր աշակերտի ծնողք, անոնց հետեւողութիւնն ու քաջալերանքը կանոնաւորապէս երաժշտանոց յաճախելու:



Հանդիսութեան աւարտին ուսուցիչները գնահատուեցան աշակերտներուն կողմէ ծաղկեփունջերով:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեանի առաքելական օրհնութեան աղօթքով: